ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 30 ՀՈՒՆԻՍԻ

Ստեփանակերտում, Հաղթանակի հրապարակում շարու նակվում են արտոնված մի տինգները: Ժողովրդական տրիբունայում էին ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի անդամ Ս. Բաբայանը, կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Վ. Աթաջանյանը: Կուսակցական, խորհրդային, արհմիութենական ղեկավար աշխատողներ:

—Օրերս Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանին մասնակցեցին նաև Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները,—իր ելույթում նշեց կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի երկրորդ քարտուղար Հրանտ Մելքումյանը:— Ղարաբաղի պատվիրակները հանդիպումներ ունեցան Երևանի առաջին հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների հետ: Մշակվեց համագործակցելու ծրագիր, խնդիր դրվեց, որ մարզկենտրոնում և շրջաններում բացվեն հպատանյան միավորումների մասնաճյուղեր, բաժանմունքներ: Շուտով հանձնաժողովներ կժամանեն մարզ և կոնկրետ գործնական քայլեր կարվեն այդ ուղղությամբ: Հանի որ դժվարացել է ավտոխճուղային հաղորդակցությունը մայր Հայաստանի հետ, շարք է մտել լրացուցիչ օդային երթուղի՝ Գորիս-Ստեփանակերտ, որն առաժմ կոչվում է փորձնական: Այն աշխատում է հուլիսի 1-ից: ԼՂԻՄ պատվիրակությունը հանդիպում ունեցավ նաև Արարատի շրջանի Արարատ գյուղում գործող «Էնավաշ» կոոպերատիվի կոլեկտիվի և նրա ղեկավար Ժորա Սամվելյանի հետ, որը խնդրեց հաղորդել, որ կոոպերատիվի առաջին «Ժիգուլի» ավտոմեքենան կնվիրվի արցախցի բազմազավակ ընտանիքի: Պայմանների մասին արդեն գրվել է «Խորհրդային Ղարաբաղում»:

—Մենք, Մոսկվայում ապրող հազարավոր հայերս, չէինք կարող անտարբեր մնալ պատմական Արցախում և Հայաստանում ծավալված ազգային շարժման նկատմամբ,— իր ելույթում ասաց մոսկվայաբնակ Վալերի Օհանջանյանը: — Մենք ուշի-ուշով հետևում էինք, տառացիորեն կլանում ադատեդից ստացված յուրաքանչյուր լուր, ցավում ու տագնապում շարժման մակընթացության հետ: Այնտեղ, Մոսկվայում ևս տեղի են ունենում միտինգներ, որտեղ մենք արտահայտում էինք մեր միասնությունն ու համերաշխությունը շարժմանը: Ապրիլի 24-ին մեկուկես հազար հայեր Մոսկվայում մի տինգ արեցինք և դատապարտեցինք 1915 թվականի հայկական ցեղասպանությունը և դեռ իր քաղաքական գնահատականը չստացած սումգայիթյան ոճրագործությունը: Մեր սիրտը այստեղ է, այս լեռներում:

Միտինգի մասնակիցներին հուզեց խորհրդային իրավաբանների կենտրոնական վարչության ասոցիացիայի անդամ Հենրիխ Աղաբեկովի խոսքը.

—Իմ հարազատներ, իմ հայրենակիցներ: Հիշենք մեր պատմությունը, չմոռանանք մեր լեզուն, մեր գոյապահպանության հիմքը: Արցախի ժողովուրդը հայ ժողովրդի համար խիստ ճակատագրական Սարդարապետի ճակատամարտի ելքին քաջարի զորախմբերով իր ներդրումն է ունեցել: Արցախն այժմ էլ համահայկական շարժման ավանգարդում է: Ունենանք համբերություն, զգոնություն, երևույթների ընթացքի գնահատում:

Ղարմետաքսկոմբինատի կուսկոմիտեի քարտուղար Ռոբերտ Քոչարյանը հակիրճ ինֆորմացիա տվեց Արցախում ժողովրդական ճակատի ստեղծման ուղղությամբ կատարվող քայլերի մասին: Նշվեց, որ մարզի 67 աշխատավորական արտադրական, ստեղծագործական կոլեկտիվներում ստեղծվել են «Արցախյան հայոց շարժում» ժողովրդական ճակատի սկզբնական կազմակերպություններ, որոնք ընտրել են իրենց ներկայացուցիչները ժողովրդական ճակատի քաղաքային հիմնադիր կոնֆերանսի համար:

Միտինգում ելույթ ունեցան նաև բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանը, շինարար Ավետիս Գրիգորյանը, դասախոս Գրիգորի Աֆանասյանը, մտավորականության ներկայացուցիչներ: Դարձյալ հնչեց Արկադի Մանուչարովի նկատմամբ խափանման միջոցը փոխելու պահանջը: Նշվեց, որ հուլիսի 1-ից քաղաքում ուղերթ կկատարի մեկ ավտոբուս, որն անվճար կսպասարկի մարդկանց: Դա «Ամարաս» բարեգործական ընկերության նախաձեռնությունն է, որը հիվանդների, ծերերի, կանանց, երեխաների երթևեկությունը հեշտացնելու նպատակ է հետապնդում:

Միտինգի մասնակիցներն ընդունեցին դիմում՝ ուղղված ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Ս. Գորբաչովին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ժողովրդական դեպուտատներին:

Ն. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ